Հավելված N 1
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 1-ի N 896 - Ն որոշման

ԶԵՆՔԸ ՊԱՀԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Սույն կարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական և ծառայողական, այդ թվում՝ ժամանակավոր օգտագործման համար ստացված, ինչպես նաև որպես պարգև տրված մարտական զենքը պահելու պայմաններին վերաբերող պահանջները, զենքի պահման անվտանգության և պահպանության ապահովման նկատմամբ վերահսկողությունը:

2. Զենքը և դրա փամփուշտները պահելը թույլատրվում է ոստիկանության մարմիններից զենք պահելու և օգտագործելու, պահելու և կրելու թույլտվություն ստացած իրավաբանական և ֆիզիկական անձանց:

3. Իրավաբանական և ֆիզիկական անձինք Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանությունից զենք պահելու թույլտվություն ստանալուց հետո պարտավոր են ապահովել զենքի պատշաճ պահպանության և այն պահելու անվտանգության պայմանները:

4. Զենքն իրավաբանական անձանց կողմից պետք է պահվի հատուկ կահավորված զենքի զետեղարաններում՝ չհրկիզվող կամ մետաղյա պահարաններում, բուրգերում, արկղերում՝ լիցքաթափված, իջեցված ձգանով, պահպանակի դրված, մաքրված, յուղված, փամփուշտներից առանձնացված վիճակում:

5. Զենք պահելու չհրկիզվող կամ մետաղյա պահարանում, բուրգերում կամ արկղերում ամրացվում են հաշվեպիտակներ, որոնց վրա նշվում են զենքերի տեսակները, մոդելները, համարները՝ համաձայն համարային հաշվառման ցուցակի ու հաշվառման մատյանի:

6. Իրավաբանական անձանց զինասենյակներում զենքի հետ համատեղ թույլատրվում է պահել փամփուշտներ՝ տուփերով, պահեստատուփերով կամ պահունակներով:

7. Գործարանային փաթեթավորմամբ զենքերը (տուփերով, արկղերով) և փամփուշտները (ցինկերով, արկղերով) կարող են պահվել դարակաշարերի վրա:

8. Չփաթեթավորված փամփուշտները պահվում են միայն տարբեր գաղտնանիշ ունեցող երկու փականներով փակվող մետաղյա արկղերում կամ պահարաններում:

9. Զենքի ընդունման, դրանց փոխանցման, հաշվառման անհրաժեշտ փաստաթղթերը լրացնելու կարգը սահմանվում է իրավաբանական անձանց ղեկավարների հրամաններով:

10. Չհրկիզվող կամ մետաղյա պահարաններում, բուրգերում և արկղերում իրարից առանձին պահվում են՝

1) փամփուշտները և զենքը, ընդ որում՝ հրագործական կազմ ունեցող, արցունքաբեր կամ գրգռիչ նյութերով լիցքավորված, ինչպես նաև չպայթած խոտան փամփուշտները պահվում են առանձին փաթեթներով.

2) գեղարվեստական հարդարված զենքերը, որոնք պարունակում են թանկարժեք մետաղներ կամ քարեր.

3) վերցված, քաղաքացիների կամ իրավաբանական անձանց աշխատողների կողմից պահպանության փոխանցված, ինչպես նաև հաշվեկշռում եղած զենքերը.

4) առանձին մետաղյա տարաներում կամ պոլիէթիլենային պարկերում տեսակավորված մանրածախ առևտրի համար նախատեսված վառոդը:

11. Զենքի պահման համար նախատեսված մետաղյա պահարանները և արկղերը պետք է փակվեն փականով և ունենան 2 մմ-ից ոչ պակաս հաստությամբ պատեր, վառոդների, փամփուշտների և հրավառային միջոցների պահման պահարանները և արկղերը՝ 3 մմ-ից ոչ պակաս, իսկ օդային տրանսպորտով փոխադրվող զենքի պահման համար նախատեսվածները՝ 1,6 մմ-ից ոչ պակաս հաստությամբ պատեր:

11. Չհրկիզվող կամ մետաղյա պահարանները, բուրգերը, արկղերը և դարակաշարերը զետեղարաններում տեղադրվում են մուտքի դռնից 1,5 մ և պատուհաններից՝ 0,5 մ, իսկ փամփուշտների արկղերը և աերոզոլային սարքերը՝

տաքացուցիչ սարքերից 1 մ հեռավորության վրա, բացի այդ պահարանների, արկղերի, բուրգերի միջև հեռավորությունը պետք է հնարավորություն տա դրանց դռների ազատ բացվելուն:

13. Չհրկիզվող կամ մետաղյա պահարանի, բուրգի, արկղի համար ստեղծվում է գույքացուցակ, որտեղ նշվում են պահվող զենքի տեսակը, քանակը և համարները, ինչպես նաև ամրացվում է նշատախտակ, որտեղ շենքի գույքացուցակի համաձայն՝ նշվում են հերթական համարը, անվանումը, ստորաբաժանման, իրավաբանական անձի անվանումը, որի իրավասության տակ է գտնվում զենքը, ինչպես նաև՝ զենքի պահպանման պատասխանատու անձի անունազգանունը և նրա կապարակնիքի կամ կնիքի համարը: Ցուցակները ստորագրվում են իրավաբանական անձի ղեկավարի հրամանով նշանակված պատասխանատու անձի կողմից և ճշտվում են, եթե դրանց մեջ փոփոխություններ են կատարվել:

14. Մաքսային հսկողության տակ գտնվող զենքի և դրա փամփուշտների պահման պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

15. Իրավաբանական անձանց կողմից ողորկ-երկարափող հրազեն, համակցված հրազեն, այդ թվում՝ ակոսափող կամ օդաճնշիչ զենքը, որի փողային էներգիան գերազանցում է 7,5 ջոուլը, իսկ տրամաչափը 4,5 միլիմետրից ավելի է, ինչպես նաև սառը շեղբավոր և նետողական զենքը կարող են պահվել սույն կարգի պահանջներին համապատասխան, սպորտային օբյեկտների՝ զենքի պահման զետեղարաններում՝ ոստիկանության մարմիններից զենքը պահելու և օգտագործելու թույլտվություն ստանալուց հետո:

16. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին պատկանող զենքն ու դրա փամփուշտները պետք է պահվեն բնակության վայրում, դրանց պահպանման, ամբողջականության, անվտանգության պայմաններն ապահովող չհրկիզվող կամ մետաղյա պահարաններում, գերկայուն (գերամուր) նյութից պատրաստված կամ երկաթով պատված փայտյա արկղերում:

17. Զենքի հավաքածուի պահելու սենյակը պետք է կահավորվի հրշեջ-պահպանական ահազանգման համակարգով, իսկ մուտքի դուռը պետք է լինի մետաղյա՝ լրացուցիչ ամրացված: Առաջին և վերջին հարկերում գտնվող սենյակի կամ բնակարանի պատուհաններին տեղադրվում է մետաղյա վանդակաշար, զենքի պահման զետեղարանների համար նախատեսված կարգով:

18. Եթե տեխնիկական պատճառներով հնարավոր չէ կահավորել անվտանգության ազդանշանային համակարգ, ապա զենքի պահման պահարանները և արկղերն ամրացվում են պատերից մեկին՝ երկուսից ոչ պակաս 16 մմ և ավելի հաստությամբ պողպատյա հեղույսներով:

19. Հատուկ պետական պաշտպանության ենթակա անձինք, պետական ռազմականացված կազմակերպությունների աշխատողները, զենքն ու դրա փամփուշտները (այդ թվում՝ մարտական զենքը) պահում են իրենց բնակության վայրում՝ սույն կարգի 11-րդ կետով նախատեսված կարգով:

20. Քաղաքացին Հայաստանի Հանրապետությունից 180 օրից ավելի բացակայելու դեպքում զենքն ի պահ է հանձնում Հայաստանի Հանրապետության ոստիկանության տարածքային ստորաբաժանմանը:

21. Օտարերկրյա քաղաքացիների կողմից Հայաստանի Հանրապետության տարածք որսի, սպորտային միջոցառումներին մասնակցելու կամ ցուցադրման նպատակով ներկրված զենքի ու դրա փամփուշտների ժամանակավոր պահպանության ապահովումն իրականացնում է օտարերկրյա քաղաքացիներին հրավեր ուղարկած իրավաբանական անձը:

22. Զենք պահելու զետեղարանները պետք է համապատասխանեն տեխնիկական ամրացվածության հետևյալ պահանջներին՝

1) շենքերի պատերը, միջնորմները, առաստաղը, հատակը պետք է լինեն կապիտալ կառուցված, քարային շարվածքի հաստությունը պետք է լինի 360 մմ-ից ոչ պակաս, պատերի բետոն բլոկները՝ 200 մմ-ից ոչ պակաս, երկաթբետոնե ծածկերը՝ 180 մմ-ից ոչ պակաս, երկու շերտով բետոնե բլոկները՝ յուրաքանչյուրը 90 մմ.

2) նշված պահանջներին չհամապատասխանող կառույցի պատերը պատվում են 16 մմ-ից ոչ պակաս երկաթյա ձողերից պատրաստված 150x150 մմ-ից ոչ ավելի չափի վանդակաշարով.

3) ներքին պատերը կառուցելու ժամանակ թույլատրվում է օգտագործել զուգավորված բետոնե միջնապատային սալեր, յուրաքանչյուրը 80 մմ-ից ոչ պակաս հաստությամբ՝ նրանց միջև նշված վանդակաշար անցկացնելով.

4) պատերի ամրացման համար թույլատրվում է օգտագործել այլ հատուկ նյութեր, որոնք իրենց տեխնիկական բնութագրով չեն զիջում նշված կոնստրուկցիաներին.

5) ինժեներական ցանցերի համար նախատեսված, ինչպես նաև օդափոխիչ հորանցքերը, պատերի անցքերը փակվում են 16 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթե ձողերից պատրաստված՝ 50x50 մմ չափի վանդակաշարով.

6) դռների խորշերը սարքավորվում են՝

ա. 3 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթյա դռնով, որն ուժեղացվում է պարագծով և անկյունագծով՝ պատերի 3 մմ-ից ոչ պակաս հաստությամբ և կողերի 50 մմ-ից ոչ պակաս լայնությամբ երկաթյա պրոֆիլով,

բ. 16 մմ-ից ոչ պակաս հաստությամբ ձողերով և 150x150 մմ-ից ոչ ավելի վանդակների չափերով պատրաստված վանդակապատ դռնով, որը նույնպես ամրացվում է պարագծով և անկյունագծով: Դռան խորշի շրջանակը պատրաստվում է պատերի 5 մմ-ից ոչ պակաս հաստությամբ և կողերի 100 մմ-ից ոչ պակաս լայնությամբ երկաթյա պրոֆիլից.

7) երկաթյա վանդակապատ դռան ձողերը յուրաքանչյուր հատման և պրոֆիլների հետ միացման տեղերում եռակցվում են, իսկ դռների խորշի շրջանակներն ամրացվում են պատերի մեջ 80 մմ խորությամբ և ցեմենտապատվում են.

8) մուտքի հիմնական և վանդակապատ դռները պետք է ունենան տարբեր գաղտնանիշով ներքին երկու փականներ, ծխնիների հուսալի կառուցվածք և ամրություն.

9) փականների փակող մասի լայնակի կտրվածքի մակերեսը պետք է լինի 3 քառ. սմ-ից ոչ պակաս.

10) մուտքի դուռը լրացուցիչ սարքավորվում է կնքման համար հարմարանքով, ինչպես նաև 3 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթյա ականջիկներով՝ դրսից կախովի կողպեքով կամ երկրորդ ներքին փականով փակելու համար.

11) զենքի զետեղարանը պետք է սարքավորվի Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից սահմանված նորմերին համապատասխան, հրդեհաշիջման միջոցներով և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության համապատասխան ծառայության կամ պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպության պահնորդաազդանշանային կենտրոնացված պահպանության դիտակետին միացված ահազանգման համակարգով կամ ինքնաահազանգման համակարգով՝ ձայնային կամ լուսային ազդանշանը մոտակա պահակակետին միացնելով (եթե այն շուրջօրյա ծառայության է) կամ շենքի արտաքին մասին ամրացնելով.

12) ազդանշանային սարքավորումների էլեկտրասնուցման համակարգը պետք է ունենա պահեստային էլեկտրասնուցման աղբյուր,

13) զենք օգտագործելու, պահելու և զետեղարանների տեխնիկական ամրացվածությունը պահանջների համապատասխանելիության ստուգման մասին կազմվում է ակտ (Ձև N 1):

23. Զենքի հանձնման և ստացման համար թույլատրվում է զետեղարանի պատի կամ դռան մեջ բացել 300 x200 մմ չափի պատուհան՝ ներսից փականով փակվող 3 սմ հաստությամբ ներքին երկաթյա դռնակով: Պատուհանի շրջանակը պատրաստվում է 5 մմ-ից ոչ պակաս պատերի հաստությամբ և 100 մմ-ից ոչ պակաս կողերի լայնությամբ երկաթյա պրոֆիլից:

24. Իրավաբանական անձանց կողմից պահվող զենքն ու փամփուշտները, որոնք նախատեսված չեն տվյալ իրավաբանական անձանց օգտագործման համար, ինչպես նաև զինասենյակներում նախատեսված նորմերից ավելի (500 միավորից ավելի զենք և 150000 հատից ավելի փամփուշտ) զենք պահելն իրականացվում է սույն հրահանգի պահանջներին համապատասխան սարքավորված պահեստային շինությունում:

25. Պահեստային շինությունը տեղակայվում է առանձին կառուցված, ոչ բնակելի շենքում, իսկ փամփուշտների պահման համար պատրաստվում են ստորգետնյա կառույցներ կամ վերգետնյա շինություններ՝ թմբապատված մինչև տանիքը: Այդպիսի շինությունների կառուցման հաշվարկները կատարվում են համապատասխան մասնագիտացված կազմակերպության կողմից:

26. Պահեստային շենքի պատերը, առաստաղը և հատակը պետք է համապատասխանեն այն պահանջներին, որոնք սահմանված են զենքի զետեղարանների համար:

27. Շենքը սարքավորվում է հիմնական և պահեստային դարպասներով, ինչպես նաև՝ լրացուցիչ փականով փակվող երկաթյա վանդակաշարով: Դարպասները պետք է լինեն մետաղյա կամ փայտից՝ դրսից և կողերից պատված 2 մմ հաստությամբ երկաթյա թիթեղով, ունենան ծխնիների հուսալի ամրություն և ներքին փականներ՝ իրենց ամրապնդիչներով (վերևից և ներքևից): Երկաթյա վանդակաշարերը պետք է պատրաստվեն 16 մմ-ից ոչ պակաս հաստությամբ ձողերից:

28. Մուտքի դարպասները և վանդակաշարերը կարող են ունենալ ներշինված դռնակներ՝ սարքավորված 24-րդ կետի պահանջներին համապատասխան.

1) դարպասները, վանդակաշարերը և մուտքի դռները պարագծով ու անկյունագծով ամրացվում են 5 մմ-ից ոչ պակաս պատերի հաստությամբ և 100 մմ-ից ոչ պակաս կողերի լայնությամբ երկաթյա պրոֆիլով: Պատուհանախորշերը փակվում են 16 մմ-ից ոչ պակաս հաստությամբ երկաթյա ձողերից պատրաստված և 150x150 մմ-ից ոչ ավելի չափի վանդակաշարով.

2) դարպասների և վանդակաշարերի հիմքերը տեղադրվում են 80 մմ-ից ոչ պակաս խորության վրա և ցեմենտապատվում են:

29. Պահեստային շինություններում զենք ստացողների (հանձնողների), զենքի պահպանության համար պատասխանատու անձանց համար, ինչպես նաև հաշվառման փաստաթղթերի և կապարակնքման (կնքման) միջոցների պահման համար պատրաստվում են մեկուսացված տեղեր.

1) նշված վայրերում տեղակայվում են ոստիկանության, իրավաբանական անձի պահպանության ծառայության աշխատակիցներին կամ պահակախմբի պետին շտապ կանչելու զանգի կոճակներ.

2) պահեստներում պետք է լինեն հրդեհաշիջման միջոցներ, հրշեջապահ-պանական ահազանգման համակարգ, տարածքի սխեմաներ, զենքի և փամ-փուշտների պահպանության պատասխանատու անձանց կողմից պարտադիր կատարման համար գրավոր հրահանգներ:

30. Աշխատանքային օրվա ընթացքում վաճառասրահներում և առևտրային ցուցափեղկերում հրազենը, գազային և օդաճնշիչ զենքերը կարող են ցուցադրվել բաց ցուցափեղկերում՝ պայմանով, որ զենքի յուրաքանչյուր միավորն ամրացվի ցուցափեղկին. ապահովել զենքի պատշաճ պահպանությունը և անվտանգությունը:

31. Զենք պահելու յուրաքանչյուր զետեղարանում փակցվում են այնտեղ տեղադրված չհրկիզվող կամ մետաղյա պահարանների, բուրգերի, արկղերի և դարակաշարերի քանակի, դրանց հերթական և գույքագրման համարների ցուցակներ, ինչպես նաև կնիքների, կապարակնիքների և դրոշմակնիքների համարները, որոնցով կնքվում են դրանք:

32. Չհրկիզվող կամ մետաղյա պահարանների, բուրգերի, արկղերի և դարակաշարերի պիտակները ստորագրվում են զենքի պահպանության համար պատասխանատու անձանց կողմից և ճշտվում են փոփոխությունները մուտ-քագրելու միջոցով:

33. Զենքի պահման զետեղարանի մուտքի դռան վրա ամրացվում է տվյալ զետեղարանի հրդեհային անվտանգության և պահպանության պատասխանատու անձի անուն - ազգանունով պիտակ:

34. Եթե միևնույն զետեղարանում իրավաբանական անձի մի քանի ստորա-բաժանումների զենքեր են պահվում, ղեկավարի հրամանով նշանակվում է զետեղարանի պահպանության համար պատասխանատու անձ: Յուրաքանչյուր ստորաբաժանման զենքերը պետք է պահվեն առանձին չհրկիզվող կամ մետաղյա

պահարաններում, արկղերում, բուրգերում և կնքվեն (կապարակնքվեն) յուրաքանչյուր ստորաբաժանման զենքի պահպանության պատասխանատու անձի կողմից:

35. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց զենքի պահման զետեղարանների չհրկիզվող կամ մետաղյա պահարանների, արկղերի, բուրգերի բանալիների առաջին խուրձը պետք է պահվի զենքի պահպանության համար պատասխանատու անձի, իսկ երկրորդը՝ իրավաբանական անձի ղեկավարի մոտ:

36. Այն դեպքում, երբ կազմակերպության ղեկավարի հրամանով զենքի հանձնման պարտականությունը դրվում է զինված պահակախմբի կամ հերթափոխի պետի վրա, բանալիների երկրորդ խուրձը պահվում է նրանց մոտ և փոխանցվում է հերթափոխի ավարտից հետո՝ ստորագրելով հերթափոխի հանձնման-ընդունման գրքում: Իսկ բանալիների երկրորդ խրձի օգտագործման և պահման կարգը այլ կազմակերպություններում որոշվում է իրավաբանական անձի ղեկավարի հրամանով՝ գրավոր ուղեկցական գրությամբ համաձայնեցնելով ոստիկանության հետ:

37. Զենքի պահման անվտանգության և պահպանության ապահովման նկատմամբ վերահսկողությունը.

1) քաղաքացիների մոտ առկա զենքի և փամփուշտների պահման պայմանների ստուգման ժամանակ ոստիկանության ծառայողի կողմից պարզվում են՝

ա. առկա զենքի համապատասխանությունը տրված թույլտվություններին, ինչպես նաև՝ քաղաքացիների մոտ գտնվող փամփուշտների համապատասխանությունը գրանցված զենքի տեսակին և մոդելին,

բ. փականով փակվող չհրկիզվող կամ մետաղյա պահարանի, գերկայուն (գերամուր) նյութից պատրաստված կամ երկաթով պատված փայտյա արկղերի առկայությունը,

գ. զենքի պահման պայմանները՝ զենքի պահպանումը մեկուսացված սենյակում, լրացուցիչ փակող հարմարանքներով սարքավորված մետաղյա կամ մետաղապատ դռան առկայությունը, ազդանշանային միջոցները, պահարանների կամ արկղերի բանալիների պահման կարգը.

2) իրավաբանական անձի կողմից զենքի և փամփուշտների պահպանության անվտանգության պայմանների ստուգման ժամանակ ոստիկանության ծառայողը պարզում է՝

ա. պահման, ցուցադրման, վաճառքի և օգտագործման համար զենքի և փամփուշտների զետեղարանների տեխնիկական ամրացվածության համապատասխանությունը սույն կարգի պահանջներին,

բ. պահպանության ահազանգման համակարգի էլեկտրասնուցման և էլեկտրական հոսանքի պահեստային աղբյուրի միացման գործունեության հուսալիությունը,

գ. զենքի պահման պայմանները չհրկիզվող կամ մետաղյա պահարաններում, ցուցափեղկերի միացումը օբյեկտի ազդանշանային համակարգին, ինչպես նաև՝ զենքի և փամփուշտների գործարանային փաթեթավորմամբ կամ մետաղյա արկղերով դասավորումը դարակաշարերի վրա,

դ. զենքի առկայությունը և համապատասխանությունը հաշվառման փաստաթղթերին ու դրանք պահելու թույլտվություններին, գույքացուցակների կազմման և դրանց քանակի և համարային հաշվառման ճշտությունը,

ե. զենքի տեխնիկական վիճակը,

զ. զետեղարանների, դրանցում պահվող չհրկիզվող կամ մետաղյա պահարանների, ցուցափեղկերի, բուրգերի, արկղերի, վահանակների պահեստային բանալիների պահման կարգը, զենքի պահպանության համար պատասխանատու անձանց տրված կնիքների, կապարակնքման միջոցների հաշվառումը և պահպանումը,

է. զենքի հետ կապված աշխատանքներին առնչվելու իրավունք ունեցող անձանց թույլտվությունների կազմակերպումը, ներօբյեկտային և անցագրային ռեժիմի պահպանման համալիր միջոցառումները,

ը. զենքի հանձնման-ընդունման մատյանում հաշվառման տվյալների և գրանցումների համապատասխանությունն աշխատանքային ժամանակացույցին, ծառայության, պարապմունքների և հրաձգության անցկացման ամփոփագրերին, զենք կրելու և պահելու թույլտվություն ստացած անձանց զենքի ամրագրման մասին հրամաններին, ինչպես նաև՝ հրաձգության, զենքերը նշանափորձելու, նշանազարկը ստուգելու, ակոսափող զենքերը ստուգելու նպատակով կրակելու համար ծախսված փամփուշտների հայտերին,

թ. գործուղման մեկնող առանձին աշխատողների զենք ստանալու կարգը,

ժ. զենք ցուցադրելու կամ պահելու տարածքները պահպանության հանձնելու (ընդունելու) մասին փաստաթղթերի առկայությունը,

ժա. զենք ընդունելու, հանձնելու, զենքը լիցքավորելու և լիցքաթափելու, ինչպես նաև՝ մաքրելու տեղը սարքավորելու և այդտեղ գնդակորսիչների առկայությունը (հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց համար).

3) զետեղարանների, կառույցների և շենքերի զննությունն իրականացվում է իրավաբանական անձի ղեկավարի կամ նրա տեղակալի կամ զենքերի պահպանության համար պատասխանատու անձանց ներկայությամբ.

4) համապատասխանության գնահատման մարմիններում (կենտրոններում), ինչպես նաև՝ համապատասխան փորձարկման լաբորատորիաներում (փորձագիտական կենտրոններում) զենք պահելու և օգտագործելու վայրերը ստուգվում են համապատասխանության գնահատման մարմնի ներկայացուցիչների մասնակցությամբ.

5) զետեղարանների, կառույցների և շենքերի հետազոտման աշխատանքներին անհրաժեշտության դեպքում ընդգրկվում են ճարտարապետական վերահսկողության մարմինների կամ այլ լիազորված մարմինների իրավասու աշխատողներ:

Այն դեպքում, երբ օբյեկտը նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ սարքավորվում է տեխնիկական ամրացվածության հատուկ միջոցներով (այդ թվում՝

գնդակառրսիչներով), որոնք ունեն բարդ կառուցվածք, հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար ներգրավվում են համապատասխան մասնագետներ.

6) ոստիկանության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցները զենք պահելու օբյեկտները, ինչպես նաև առևտրային կազմակերպությունները ստուգում են կիսամյակը մեկ, կազմում են ակտ, որի պատճենը՝ ստորագրությամբ, հանձնում են իրավաբանական անձի ղեկավարին.

7) ժամանակավոր օգտագործման համար զենք ստացած պաշտոնատար անձանց և զենքի սեփականատեր-քաղաքացիների բնակության վայրում և իրավաբանական անձանց հաշվառման վայրում ստուգելու զենքի առկայությունը և այն պահելու պայմաններն իրականացվում են ոստիկանության ծառայողների կողմից՝ տարին մեկ անգամ.

8) զենքի պահման պայմանների խախտումներ հայտնաբերելու դեպքում ոստիկանությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց տալիս է դրանց վերացման մասին պարտադիր կատարման ենթակա հանձնարարականներ, ինչպես նաև իրենց իրավասության սահմաններում՝ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքի առկայության դեպքում տրված թույլտվությունները ճանաչում են ուժը կորցրած (Ձև N 2).

9) զենքը վերցվում է արձանագրությամբ (Ձև N 3), որը մեկ օրվա ընթացքում զեկուցագրով զեկուցվում է ոստիկանության ստորաբաժանման ղեկավարին: Վերցված զենքը հանձնվում է ոստիկանության տվյալ ստորաբաժանման հերթապահ մաս՝ ի պահ.

10) իրավաբանական անձի խախտում թույլ տված աշխատողի զենքը վերցնելուց հետո իրավաբանական անձի ղեկավարին տրվում է գրավոր հանձնարարական:

38. Կազմակերպություններում զենքի և փամփուշտների հաշվառումն իրականացնում է իրավաբանական անձի ղեկավարը կամ այն աշխատողը, որի վրա իրավաբանական անձի ղեկավարի հրամանով դրվել են զենքի և փամփուշտների պատասխանատու պահպանության պարտականությունները: Կառուցվածքային,

տարածքային ստորաբաժանումներ ունեցող կազմակերպություններում իրավաբանական անձի ղեկավարի հրամանով զենքի և փամփուշտների պատասխանատու պահպանության պարտականությունները դրվում են յուրաքանչյուր տարածքային ստորաբաժանման ղեկավարի վրա:

39. Սույն կարգով նախատեսված զենքի և փամփուշտների հաշվառման ցուցակագրերը, գրանցման մատյանները, ինչպես նաև ավտոմատացված հաշվառման համար նախատեսված ձևաթղթերն օգտագործելուց առաջ ենթակա են պարտադիր գրանցման՝ թույլտվության համակարգի ստորաբաժանման կողմից: Մատյանների թերթերը համարակալվում, կարվում և կնքվում են ոստիկանության ստորաբաժանման կնիքով: Կազմակերպություններում և դրանց ստորաբաժանումներում զենքը պահելու վերահսկողություն իրականացնելու նպատակով ներքին հաշվառման փաստաթղթերի վարման կարգը և զենքի պահպանության պատասխանատու անձանց պարտականությունները սահմանվում են իրավաբանական անձանց կողմից:

40. Զենքի և փամփուշտների փաստաթղթերը կարվում են հաշվառման գործերում, իսկ համակարգիչներով ձևակերպված փաստաթղթերը՝ հաշվառման գործեր վարելու կանոնների պահանջներին համապատասխան մատյաններում: Ամրակարված փաստաթղթերի մասին տեղեկությունները նախապես մուտքագրվում են գործերի գույքացուցակում և մատյանում: Զենքի հաշվառման ցուցակագրերը, գրանցման մատյանները, հաշվառման փաստաթղթերով գործերը վարվում են զենքի ու փամփուշտների պահման պատասխանատու անձանց կողմից, իսկ դրանց ավարտից հետո հանձնվում են կազմակերպության արխիվ: Հաշվառման փաստաթղթերով գործերը, ցուցակագրերը, գրանցման մատյանները ոչնչացվում են 10 տարի պահելուց հետո կամ տվյալ իրավաբանական անձի գործունեությունը վերահսկող՝ ոստիկանության ստորաբաժանման գրավոր թույլտվությամբ: Եթե հաշվառման փաստաթղթերի հետագա պահպանումն իրավաբանական անձի մոտ անհնար է, դրանք հանձնվում են ոստիկանության ստորաբաժանումներին:

41. Առանձին զետեղարանում զենքի և փամփուշտների տեղաբաշխման ժամանակ դրանց պահպանության համար պատասխանատու անձանց կողմից տարվում են հետևյալ հաշվառման փաստաթղթերը՝

1) զենքի և փամփուշտների հանձնման-ընդունման մատյան (Ձև N 4).

2) զենքի և փամփուշտների առկայության և տեխնիկական վիճակի ստուգման մատյան (Ձև N 5).

3) շուրջօրյա զինված պահպանության առկայության դեպքում հերթապահության հանձնման-ընդունման մատյան (Ձև N 6).

4) պահպանության տակ գտնվող զենքի և փամփուշտների զինասենյակներում, չհրկիզվող կամ մետաղյա պահարաններում, բուրգերում և արկղերում պահվող զենքի փաթեթավորման թերթիկները (Ձև N 7).

5) չհրկիզվող կամ մետաղյա պահարանում, բուրգում, արկղում տեղավորված զենքի ամրացվածության ցուցակ (Ձև N 8).

6) զենքի և փամփուշտների հետ կապված աշխատանքներին թույլատրված անձանց ցուցակ:

42. Պահեստային շինություններում զենքի և փամփուշտների տեղաբաշխման դեպքում հաշվառման փաստաթղթերը վարվում են հետևյալ ձևով՝

1) ստացվող, պահվող և փոխանցվող (վաճառվող) զենքի ու փամփուշտների առկայության և շարժի հաշվառման մատյանում (Ձև N 9). մեծ քանակությամբ զենքերի պահպանության դեպքում թույլատրվում է ունենալ հաշվառման մի քանի մատյաններ՝ ըստ զենքի մոդելի և փամփուշտների տեսակների.

2) դարակաշարերի վրա պահվող զենքի և փամփուշտների դարակաշարային պիտակներ (Ձև N 10).

3) պահպանության ստորաբաժանման համար նախատեսված ծառայողական փաստաթղթեր.

4) զենքի ու փամփուշտների ներկրման և արտահանման հիմնական, ժամանակավոր և մեկանգամյա անցագրերի հաշվառման մատյաններ:

43. Բեռների պահպանության, ուղեկցման կամ ինկասացիայի ստորաբաժանումներում, ինչպես նաև պահակակետերում վարվում են հետևյալ ծառայողական փաստաթղթերը՝

1) իրավաբանական անձի ղեկավարի կողմից հաստատված ծառայության ժամանակացույց.

2) օբյեկտի (օբյեկտների) պահպանությունը, բեռների ուղեկցումը և արժեքավոր իրերի ինկասացիան իրականացնող վերակարգերի ամենօրյա պահակակետային ամփոփագրեր, որոնք պետք է հաստատվեն իրավաբանական անձի ծառայությունը կազմակերպող պատասխանատու անձի կողմից.

3) օբյեկտների պահպանության պահակակետերի ցանկ, ինկասացիայի և բեռների ուղեկցման երթուղիներ՝ նշելով օգտագործվող զենքի և փամփուշտների տեսակները և մոդելները.

4) իրավաբանական անձի աշխատողներին անհատական ամրացված զենքի և փամփուշտների համարային հաշվառման մատյան (Ձև N 11).

5) շարժական պահակախմբերի երթուղիները՝ հաստատված իրավաբանական անձի ղեկավարի կողմից.

6) ուսումնական հրաձգության, զենքի նշանափորձման և նշանազարկը ստուգելու նպատակով փամփուշտներ բաց թողնելու հայտեր, հաշվառման գործեր և իրավաբանական անձի ղեկավարի հրամանների պատճեններ:

44. Զենքի և փամփուշտների առևտրով զբաղվող իրավաբանական անձանց կողմից վարվում են՝

1) ստացվող, պահվող և փոխանցվող զենքի ու փամփուշտների առկայության և շարժի հաշվառման մատյաններ, ինչպես նաև՝ կոմիսիոն վաճառքի ընդունված զենքի և փամփուշտների հաշվառման նույնանման առանձին մատյաններ.

2) վաճառված զենքի և փամփուշտների հաշվառման մատյան (Ձև N 12).

3) փաստաթղթեր՝ զենքի և փամփուշտների պահման յուրաքանչյուր վայրի համար (զինասենյակի, պահեստի, շինության).

4) զենքի և փամփուշտների ընդունման ակտ (Ձև N 13):

45. Հատուկ կանոնադրական խնդիրներ իրականացնող իրավաբանական անձանց կողմից վարվում են՝

1) անհատական ամրացված զենքի և փամփուշտների համարային հաշվառման մատյան.

2) զենքի և փամփուշտների պահման, ինչպես նաև իրավաբանական անձին պատկանող հրաձգային օբյեկտների վերաբերյալ հաշվառման փաստաթղթեր.

3) ուսումնական հրաձգության, ստուգման նպատակով ակոսափող հրազենը կրակելու, զենքի նշանափորձման և նշանազարկը ստուգելու նպատակով, ինչպես նաև՝ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ ծախսված փամփուշտների դուրսգրման ակտեր.

4) զենքի և փամփուշտների ընդունման-փոխանցման ակտ.

5) տարածքային ստորաբաժանումների միջև զենքի և փամփուշտների փոխանցման մասին իրավաբանական անձի ղեկավարի հրամանը՝ գրավոր տեղյակ պահելով վերահսկող ոստիկանության մարմնին:

46. Մարզական կազմակերպությունները և ուսումնական հաստատությունները վարում են՝

1) զենքի և փամփուշտների, այդ թվում՝ նաև պատասխանատու պահպանության փոխանցված զենքի համարային հաշվառման մատյան.

2) պարապմունքներ անցկացնելու համար զենք հատկացնելու և հրաձգություն անցկացնելու մասին մարզական կազմակերպության կամ ուսումնական հիմնարկի ղեկավարի հրամանի պատճենը՝ հաշվառման գործերի հետ միասին.

3) հրաձգության կամ ուսումնական պարապմունքների համար զենք և փամփուշտներ հատկացնելու հայտ.

4) հրաձգության ժամանակ զենքի և փամփուշտների բաշխման հանձնման ամփոփագրեր.

5) օգտագործված փամփուշտների դուրսգրման ակտեր.

6) զենքի և փամփուշտների ընդունման-փոխանցման ակտ.

7) զինասենյակներում տեղավորված զենքի և փամփուշտների հաշվառման փաստաթղթեր, ինչպես նաև հրաձգային օբյեկտների համար նախատեսված փաստաթղթեր՝ դրանց առկայության դեպքում:

47. Որսորդական տնտեսություն վարող կազմակերպությունները վարում են՝

1) կազմակերպության աշխատողներին ամրացված քաղաքացիական զենքի և զենքի ու փամփուշտների համարային հաշվառման մատյան.

2) քաղաքացիներին աշխատանքի ընդունելու, նրանց քաղաքացիական զենք ամրացնելու մասին իրավաբանական անձի ղեկավարի հրամանների պատճեններ և հաշվառման գործեր.

3) զենքի և փամփուշտների ընդունման-փոխանցման ակտ.

4) օգտագործված փամփուշտների դուրսգրման ակտեր.

5) զենք և փամփուշտներ պահող հրաձգային օբյեկտի համար նախատեսված հաշվառման փաստաթղթեր՝ դրանց առկայության դեպքում:

48. Զենքի փոխադրում իրականացնող իրավաբանական անձինք վարում են՝

1) զենքի և փամփուշտների փոխադրման հաշվառման մատյաններ, այդ թվում՝ մաքսային հսկողության տակ գտնվող զենքի և փամփուշտների հաշվառման համար առանձին մատյաններ (Ձև N 14).

2) պետական կառավարման լիազորված մարմնի կողմից սահմանված տրանսպորտային հաշվառման ուղեկցող փաստաթղթեր.

3) զենքի և փամփուշտների տեղաբաշխման ու պահման տեղերի համար սույն հրահանգով նախատեսված փաստաթղթեր, ինչպես նաև անցագրային ռեժիմ և փոխադրվող (տեղափոխվող) բեռի ուղեկցումն իրականացնող ստորաբաժանման ծառայողական փաստաթղթեր:

49. Իրավաբանական անձինք, որոնք մարզական միջոցառումները կամ որսորդությունն անցկացնում են օտարերկրյա քաղաքացիների մասնակցությամբ, նրանց կողմից ներկրված զենքը և փամփուշտները հաշվառում են զենքի ընդունման-հանձնման մատյանի առանձին բաժնում:

50. Իրավաբանական անձանց հաշվեկշռում գտնվող, այդ թվում՝ ոստիկանության ստորաբաժանումներից ժամանակավոր օգտագործման համար ստացված կամ պետական ռազմականացված կազմակերպությունների կողմից փոխանցված զենքերի ընթացիկ հաշվառման հիմնական փաստաթուղթը անհատական ամրացված զենքի և փամփուշտների համարային հաշվառման մատյանն է: Նշված մատյանի առանձին բաժնում թույլատրվում է հաշվառել իրավաբանական անձանց օգտագործման համար թույլատրված ինքնապաշտպանական հատուկ միջոցներ, ինչպես նաև զենքի խնամքի համար նախատեսված գործիքներ, նյութեր և հարմարանքներ:

51. Զենքի հաշվառման փաստաթղթերում նշվում են նրա տեսակը, ձևը, մոդելը, տրամաչափը, իսկ փամփուշտների մասին՝ լրացուցիչ, քանակը և արտադրության խմբաքանակի համարը:

52. Պահպանության պատասխանատու անձի կողմից զենքի և փամփուշտների հանձնումը կազմակերպության աշխատողներին, իրականացվում է հանձնման-ընդունման մատյանում համապատասխան գրանցում կատարելուց հետո՝ այն անձի ստորագրությամբ, որին ամրացված է զենքը: Իրավաբանական անձին պատկանող զենքի և փամփուշտների հափշտակման կամ կորստի դեպքում անհապաղ տեղեկացվում է ոստիկանության ստորաբաժանումներին՝ ըստ դրանց հաշվառման վայրի: Իրավաբանական անձի ղեկավարի կողմից ոստիկանության ստորաբաժանումների հետ համատեղ կատարվում է ստուգում, որի արդյունքներով որոշում է կայացվում զենքը և փամփուշտները հաշվառումից հանելու մասին՝ կազմելով դուրսգրման ակտ:

53. Զենքի և փամփուշտների ավելցուկ կամ պակասորդ հայտնաբերելու դեպքում իրավաբանական անձի ղեկավարը այդ մասին տեղեկացնում է ոստիկանության ստորաբաժանումներին, և նշանակվում է գույքագրում, որի ընթացքում բացահայտվում են զենքի հաշվառման տվյալների անհամապատասխանության պատճառներն ու պայմանները և դրանց հաշվառման կարգը խախտող մեղավոր անձինք: Հաշվառումից դուրս մնացած զենքը և փամփուշտները մեկ

օրվա ընթացքում ենթակա են հանձնման ոստիկանության ստորաբաժանումներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

05.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ